

Ժաննա - 17

Ժաննան իր ելույթով կոչ է անում հարցի տակ դնել իրականությունը, լինել ստեղծարար ու չսահմանափակվել ուրիշի կողմից արդեն ընդունված մտքերով:

Հրաչ - 15 և Հարութ - 13

Հրաչն ու Հարութը խոսում են այն մասին, թե ինչպես նրանք իրենց բակի փոքր երախաների հետ վերջ դրեցին բակի չորացած խոտերի հարատև կյանքին:

Սիրանուշ - 12

Սիրանուշը խոսում է մի խնդրի մասին, որի հետ նա առնչվում է ամեն օր, այն է՝ թեքահարթակների բացակայությունը Երևան քաղաքի մշակույթային վայրերում:

Վահե - 16

Վահեի ելույթը երթևեկության խնդրի մասին է:

Արթուր - 14

Արթուրի ելույթն երեխաների ու մեծահասակների աշխարհների մասին է, այն մասին, թե ինչպես ենք մենք գիտակցաբար մոխրագույն ներկում մեր կյանքը:

Լիլիթ - 17

Լիլիթը խոսում է այն մասին, թե ինչպես է մարդու խոսքը, նրա լսած երաժշտությունն ու կարդացած գրականությունը ապդում և ձևափոխում մարդու ԴՆԹ-ի կառուցվածքը:

Էդուարդ - 15

Էդուարդը խոսում է ֆիլմ դիտելու մշակույթի մասին:

Լենա - 16

Լենան խոսում է այն մասին, թե ինչպես նա իր հասակակիցների հետ միասին կարողացել է պաշտպանել դպրոցականների առողջապահական պարտադիր ծառայություններից օգտվելու իրավունքը:

Արման - 17

Արմանը խոսում է նկարչության հանդեպ իր սիրո մասին:

Մանե - 10

Մանեն խոսում է մեծահասակների և երեխաների աշխարհընկալման տարբերության մասին, և թե ինչպես են մանուկները գրեթե ամենուր տեսնում պատկեր և յուրաքանչյուր երևույթ տեսանելիացնում:

Ռուբեն - 17

Ռուբենը խոսում է ընտրական գործընթացի մասին, այն մասին, թե ինչպես հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, վաճառելով իրենց ձայնը, վաճառում են երկրի ապագան:

Ջուլիա - 14

Ջուլիան իր կյանքի երկու ամենածանր տարիներն անցկացրել է խնամքի գիշերօթիկ հաստատությունում: Նա պատմում է այն մասին, որ միայն հույսն է իրեն օգնել հաղթահարել այդ դժվարությունները և սպասել լավին:

Դավիթ - 9

Դավիթը խոսում է իր երազանքի մասին, այն է կառուցել տներ Գյումրիում բոլոր մարդկանց համար, այնպես որ, ոչ ոք տնակում չապրի, իսկ քաղաքն էլ գեղեցիկ լինի:

Սվետա - 17

Սվետան պատմում է Գավառում իր իրականացրած ծրագրերի մասին, և խրախուսում է իր հասակակիցներին ձեռքերը ծալած չլստել, այլ լինել համարձակ ու չվախենալ որևէ խոչընդոտից:

Աննա - 17

Աննան հատուկ կարիքներ ունեցող երեխա է, նա ունի թույլ լսողություն, ինչը սակայն չի խանգարում, որ Աննան պարի:

Նարեկ - 18

Նարեկն իր ելույթով ցանկանում է կոտրել տեսախաղերի մասին տարածված միֆերը:

Անահիտ Վ. - 16

Անահիտը խոսում է այն մասին, թե ինչպիսին է եղել իր ուժերին հավատալու ճանապարհը:

Նադիա - 13


Նադիան կիսվում է իր ձախողված փորձով և թե ինչ նա սովորեց դրա արդյունքում:

Անահիտ Մ. - 16

Անահիտը խոսում է տասներկուամյա ուսուցման մասին:

Վանե - 15

Վանեն խոսում է դպրոցներում bully-ների մասին, և թե ինչպես պաշտպանվել նրանցից:



Անուշ - 18

Անուշը խոսում է այն մասին, որ կյանքում ամեն ինչ հնարավոր է, միայն մի փոքր ցանկություն է հարկավոր:

Կատրին - 15

Կատրինը խոսում է մեր կրթական համակարգում ուսուցիչների կողմից երեխաների հանդեպ բռնության խնդրի մասին:

Նարե - 15

Նարեն իր պատմությամբ փորձում է ցույց տալ, որ կյանքում անհնարին ոչինչ չկա, պետք է ընդամենը փորձել:

Միքայել - 16

Միքայելը խոսում է երեխաների և մեծահասակների մտածելակերպի տարբերությունների մասին:

TED^x Kids@Yerevan

x = independently organized TED event

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



ԾՐԱԳԻՐ

